ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/57-1

ք. Մեծամոր «26» հոկտեմբերի 2022թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մոդեռն Հոլդինգս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Մխիթարյանի, որը գործում է «Մոդեռն Հոլդինգս» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մրգաշատ բնակավայրի երաժշտական դպրոցի վերանորոգման և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 75 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր՝ եթե նախագծա-նախահաշվային փաստաթղթերով այլ ժամկետ սահմանված չէ: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 11,904,000.00 (տասնմեկ միլիոն ինը հարյուր չորս հազար) ՀՀ դրամ, որից 1,984,000.00 (մեկ միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված պայմանագրի դեպքում տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին է ներկայացնում համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:Հակառակդեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Մեծամորի համայնքապետարան	<<Մոդեռն Հոլդինգս>>ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական	ՀՀ Արմավիրի մարզ Արմավիր համայնք
կենտրոն 1	Բաղրամյան փողոց 31/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>ԲԲԸ Արմավիրի մ/ճ
Հ/Հ 900332001529	Հ/Հ 220033332895000
ՀՎՀՀ 04440608	ՀՎՀՀ 04437061
համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյան	Տնօրեն՝ Գեղամ Միսիթարյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
« 26 հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/57-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	աշխատանքի							
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գումար/ ՀՀ դրամ	կատարման	
							Հասցեն	Ժամկետը
1	45231129/502	Մրգաշատ բնակավայրի երաժշտական դպրոցի վերանորոգման և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ	Մրգաշատ բնակավայրի երաժշտական դպրոցի վերանորոգման և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացված է Հավելված 1.1-ով, իսկ օրացուցային գրաֆիկը Հավելված 2-ով: Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:	դրամ	1	11,904,000.00	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնք	Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 75 օրացուցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001529
ՀՎՀՀ 04440608
համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մոդեռն Հոլդինգս>>ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ Արմավիր համայնք
Բաղրամյան փողոց 31/2
<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>ԲԲԸ Արմավիրի մ/ճ
Հ/Հ 220033332895000
ՀՎՀՀ 04437061
Տնօրեն՝ Գեղամ Մխիթարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
« 26 » հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/57-1 ծածկագրով պայմանագրի

Չափաբաժին 1

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՄՐԳԱՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

NN	ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ OBOCHOBANIE	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ НАИМЕНОВАНИЕ РАБОТ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ	ԾԱՎԱԼԸ ОБЪЕМ	1 ՄԻԱՎՈՐԻ ԱՐԺԵՔԸ /հազ. Դրամ/ СТОИМОСТЬ 1 ЕДИНИЦЫ /тыс. AMD/	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔԸ ОБЩАЯ СТОИМОСТЬ/ ՀԱԶ. ԴՐԱՄ
1	2	3	4	5	6	7
		1. ԲԱՑՎԱԾՔՆԵՐ/ПРОЕМЫ				
1	E46--124	Փայտե դռների քանդում Снос деревянных дверей	մ2 / м2	28.260	1.500	42.390
2	E46--122	Փայտե պատուհանների և պատուհանագոգերի քանդում Снос деревянных окон и подоконники	մ2 / м2	82.830	1.490	123.417
3	ինֆ տեղ	Մուտքի մետաղական դռան տեղադրում /համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Установка металлической входной двери / по согласованию с заказчиком /	հատ / шт	1.000	83.000	83.000
4	Ինֆ. Տեղ.	Մետաղապլաստե դռան տեղադրում, սպիտակ, 60մմ հաստ., հայկական պրոֆիլ Монтаж металлопластиковой двери, белого цвета, толщиной 60 мм, со стеклопакетом 4 + 4 мм, армянский профиль.	մ2 / м2	26.110	25.000	652.750
5	Ինֆ. Տեղ.	Մետաղապլաստե պատուհանի տեղադրում, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, չբացվող Монтаж металлопластикового окна с блоком, белого цвета, толщиной 60 мм, со стеклопакетом 4 + 4 мм, армянский профиль, неоткрывающийся	մ2 / м2	42.433	20.000	848.663
6	Ինֆ. Տեղ.	Մետաղապլաստե պատուհանի տեղադրում, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, բացվող Монтаж металлопластикового окна с блоком, белого цвета, толщиной 60 мм, со стеклопакетом 4 + 4 мм, армянский профиль, открывающийся	մ2 / м2	40.397	21.000	848.334
7	11--55 11--56	Ներքին պատուհանագոգերի հարթեցում ցեմենտավազային շաղախով 30մմ հաստությամբ Выравнивание подоконников цементно-песчаным раствором толщиной 30 мм	մ2 / м2	17.020	2.400	40.848
8	Ինֆ. Տեղ.	Պլաստմասե պատուհանագոգի տեղադրում մինչև 35սմ լայնությամբ Установка пластикового подоконника шириной до 35 см	գմ / пм	42.550	3.000	127.650
9	15--277	Բացվածքների թեքությունների բարելավված սվաղում գաջե սվաղով Улучшенная штукатурка откосов гипсовой штукатуркой	մ2 / м2	75.660	2.300	174.018
10	15--660	Բացվածքների թեքությունների բարելավված ներկում լատեքսային ներկով Улучшена покраска откосов латексной краской	մ2 / м2	75.660	1.000	75.660
11	11--107	Արտաքին շեպերի ցեմ/ավազե	գմ/пм	1.000	3.500	3.500

		սվաղում մինչև 200մմ լայնությամբ Наружная штукатурка шириной до 200 мм				
12	11--55 11--56	Արտաքին պատուհանագոգերի հարթեցում ցեմենտավազային շաղախով 30մմ հաստությամբ Выравнивание подоконников цементно-песчаным раствором толщиной 30 мм	մ2 / м2	8.510	2.500	21.275
13	3--69	Ուղղաձիգ լաստակների կապում և քանդում Связывание или демонтаж вертикальных лесов	100մ2 ուղղահայաց պրոյեկցիա	5.280	10.000	52.800
14	23-77 Գնաց 3	Հին աղբի կուտակում, դուրս բերում շենքից, բարձում ա/մեք վրա և տեղափոխում Сбор строй мусора, вывоз из здания, погрузка на самосвалы и вывоз	տ / т	3.500	7.300	25.550
					Ընդամենը	***3119.855***
		2. ՋԵՌՈՒՑՈՒՄ/ОТОПЛЕНИЕ				
1	E18--71	Պատի ջեռուցման կաթսայի տեղադրում, փակ այրման, ծխատարով, երկկոնտուրանի, 40 կՎտ Монтаж котла настенного отопления, закрытого горения, с дымоходом, двухконтурного, 40 кВт	հատ/шт	2.000	313.500	627.000
2	E18--165	Ջեռուցման շրջանառու պոմպի տեղադրում BUP 15-1.5 U 130 УСТАНОВКА НАСОСОВ ЦЕНТРОБЕЖНЫХ	հատ/шт	2.000	30.000	60.000
3	E16--134	Զտիչի տեղադրում Φ40մմ Установка фильтра	հատ/шт	4.000	30.000	120.000
4	ինֆ տեղ/пр. лист	Անցում /ամերիկանկա/ Φ40մմ Переход / американка / Φ40 мм	հատ/шт	4.000	3.850	15.400
5	E16--134	Փականի տեղադրում Φ40մմ Установка крана Φ40 мм	հատ/шт	8.000	4.000	32.000
6	E16--134	Դատարկման փականի տեղադրում Φ20մմ Установка крана Φ20 мм	հատ/шт	2.000	1.200	2.400
7	E18--112	Այլումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում Монтаж алюминиевых радиаторов отопления	էկմ/экм	231.500	1.300	300.950
8	ինֆ տեղ/пр. лист	Այլումինե ջեռուցման մարտկոց H=500մմ Радиатор отопления алюминиевый H = 500мм	հատ/шт	463.000	3.000	1389.000
9	շուկա/ринок	Մարտկոցի կախիչ Подвеска для радиатора	զույգ/комп	36.000	1.000	36.000
10	ինֆ տեղ/пр. лист	Մարտկոցի վերին փական Φ15 Верхный вентил Φ15	հատ/шт	36.000	1.500	54.000
11	ինֆ տեղ/пр. лист	Մարտկոցի ներքին փական Φ15 Нижный вентил Φ15	հատ/шт	36.000	1.500	54.000
12	շուկա/ринок	Օդհանիչ 1/2 Воздухасбросник 1/2	հատ/шт	36.000	0.250	9.000
13	շուկա/ринок	Խցափակիչ 1/2 Заглушка 1/2	հատ/шт	36.000	0.250	9.000
14	E16--261	Պոլիպրոպիլենային, այլումինե շերտով, PN 10, d=20x3.0 մմ խողովակների մոնտաժում ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=20x3.0 мм	գմ/пм	82.500	0.350	28.875
15	E16--262	Պոլիպրոպիլենային, այլումինե շերտով, PN 10, d=25x3.5 մմ խողովակների մոնտաժում ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=25x3.5 мм	գմ/пм	165.000	0.650	107.250
16	E16--263	Պոլիպրոպիլենային, այլումինե շերտով, PN 10, d=32x4.0 մմ խողովակների մոնտաժում ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=32x4.0 мм	գմ/пм	120.000	1.100	132.000
17	E16--264	Պոլիպրոպիլենային, այլումինե շերտով, PN 10, d=40x5.0 մմ խողովակների մոնտաժում ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ	գմ/пм	195.000	2.150	419.250

		ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=40x5.0 мм				
18	շուկա/ринок	Մեկուսիչ խողովակի Φ25 խողովակի համար Труба теплоизоляция Φ25 для трубы	զմ/пм	8.000	0.400	3.200
19	ինֆ տեղ/ пр. лист	Փոխակերպիչ Φ25/Φ20 ПЕРЕХОД Φ25/Φ20	հատ/шт	8.000	0.070	0.560
20	ինֆ տեղ/ пр. лист	Փոխակերպիչ Φ32/Φ25 ПЕРЕХОД Φ32/Φ25	հատ/шт	8.000	0.075	0.600
21	ինֆ տեղ/ пр. лист	Փոխակերպիչ Φ40/Φ32 ПЕРЕХОД Φ40/Φ32	հատ/шт	8.000	0.140	1.120
22	ինֆ տեղ/ пр. лист	Անկյունակ 90º Φ20մմ УГОЛОК 90º Φ20	հատ/шт	144.000	0.050	7.200
23	ինֆ տեղ/ пр. лист	Անկյունակ 90º Φ32մմ УГОЛОК 90º Φ32	հատ/шт	16.000	0.200	3.200
24	ինֆ տեղ/ пр. лист	Անկյունակ 90º Φ40մմ УГОЛОК 90º Φ40	հատ/шт	16.000	0.370	5.920
25	ինֆ տեղ/ пр. лист	Եռաբաշխիչ Φ25*20*25մմ ТРОЙНИК Φ25*20*25	հատ/шт	24.000	0.100	2.400
26	ինֆ տեղ/ пр. лист	Եռաբաշխիչ Φ32*20*32մմ ТРОЙНИК Φ32*20*32	հատ/шт	18.000	0.300	5.400
27	ինֆ տեղ/ пр. лист	Եռաբաշխիչ Φ40*20*40մմ ТРОЙНИК Φ40*20*40	հատ/шт	22.000	0.300	6.600
28	ինֆ տեղ/пр. лист	Կցամաս պոլիպրոպիլենային d=25մմ Муфт полипропиленовый d = 25мм	հատ/шт	10.000	0.600	6.000
29	ինֆ տեղ/пр. лист	Կցամաս պոլիպրոպիլենային d=32մմ Муфт полипропиленовый d = 32мм	հատ/шт	10.000	0.130	1.300
30	ինֆ տեղ/пр. лист	Կցամաս պոլիպրոպիլենային d=40մմ Муфт полипропиленовый d = 40мм	հատ/шт	10.000	0.210	2.100
31	շուկա/ринок	Խողովակի պատի հետ ամրացման դետալ d=20մմ Монтажный элемент со стенкой трубы d = 20 мм	հատ/шт	80.000	0.100	8.000
32	շուկա/ринок	Խողովակի պատի հետ ամրացման դետալ d=25մմ Монтажный элемент со стенкой трубы d = 25 мм	հատ/шт	165.000	0.070	11.550
33	շուկա/ринок	Խողովակի պատի հետ ամրացման դետալ d=32մմ Монтажный элемент со стенкой трубы d = 32 мм	հատ/шт	120.000	0.100	12.000
34	շուկա/ринок	Խողովակի պատի հետ ամրացման դետալ d=40մմ Монтажный элемент со стенкой трубы d = 40 мм	հատ/шт	195.000	0.022	4.290
35	E46--47	Անցքերի բացում միջնորմներում Пробивка отверстий в перегородках	տեղ/мест	13.000	1.000	13.000
36	E46--50	Անցքերի բացում քարե պատերում Пробивка отверстий в стенах	տեղ/мест	2.000	2.500	5.000
37	E46--53	Անցքերի բացում միջհարկային ծածկերում Пробивка отверстий в бетонных полах	տեղ/мест	1.000	6.000	6.000
38	23--136	Անցքերի փակում պատերում և միջնապատերում Закрытие отверстий в перегородках и стенах	մ3 /м3	0.040	15.000	0.500
					Ընդամենը	*3502.065*
		Ընդամենը / Итого				*6621.920*
		Սարքավորումներ/ Оборудование				*0.000*
		Վերադիր ծախսեր 13.3% / Накладные расходы 13,3%				880.715
		Ընդամենը / Итого				*7502.635*
		Շահույթ 11.0% / Прибыль 11,0%				825.290
		Ընդամենը / Итого				*8327.925*
		ժամանակավոր շենքեր և կառույցներ 0.8% Временные постройки и сооружения 0.8%				66.623
		Ընդամենը / Итого				*8394.549*
		Ձմեռային թանկացումներ 0.48% Зимнее повышение цен 0.48%				40.294
		Ընդամենը / Итого				*8434.842*

		Փոքր ծավալի ՇՄԱ 2% Мелкие строительно-монтажные работы 2%				168.697
		Առաջացած աղբի տեղափոխում 0.15% Вывоз мусора 0,15%				12.652
		Ընդամենը / Итого				***8616.192***
		*սարքավորումներ				***1157.208***
		Ընդամենը /ներառյալ սարքավորումները/				***9773.399***
		Չնախատեսված ծախսեր 1.5% / Непредвиденные расходы 1,5%				146.601
		Ընդամենը / Итого				***9920.000***
		ԱԱՀ 20% / 20% НДС				**1984.000**
		Ընդամենը / Итого				***11904.000***

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

** Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001529
ՀՎՀՀ 04440608
համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մոդեռն Հոլդինգս>>ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ Արմավիր համայնք
Բաղրամյան փողոց 31/2
<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>ԲԲԸ Արմավիրի մ/ճ
Հ/Հ 220033332895000
ՀՎՀՀ 04437061
Տնօրեն՝ Գեղամ Մխիթարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 26 » հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/57-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Մրգաշատ բնակավայրի երաժշտական դպրոցի վերանորոգման և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ	Սույն պայմանագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Աշխատանքաների սկզբից 75 օրացուցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Սույն պայմանագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Աշխատանքաների սկզբից 75 օրացուցային օրվա ընթացքում

*Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001529
ՀՎՀՀ 04440608
համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մոդեռն Հոլդինգս>>ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ Արմավիր համայնք
Բաղրամյան փողոց 31/2
<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>ԲԲԸ Արմավիրի մ/ճ
Հ/Հ 220033332895000
ՀՎՀՀ 04437061
Տնօրեն՝ Գեղամ Մխիթարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«25» 10 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/57-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/57 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվում է Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են Մեծամորի համայնքապետարանի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են աճողական կարգով:,

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001529
ՀՎՀՀ 04440608
համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մոդեռն Հոլդինգս>>ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ Արմավիր համայնք
Բաղրամյան փողոց 31/2
<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>ԲԲԸ Արմավիրի մ/ճ
Հ/Հ 220033332895000
ՀՎՀՀ 04437061
Տնօրեն՝ Գեղամ Մխիթարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 26 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 26 » հոկտեմբերի 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
26.10.2022 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/57-1 գնման պայմանագրի

ք. Մեծամոր «22» 11 2022թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Մխիթարյանի, որը գործում է «ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 26.10.2022թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/57-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5, 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված աշխատանքի ձեռքբերման համար հատկացված 11,904,000.00 (տասնմեկ միլիոն ինը հարյուր չորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի Հավելված N 1-ով ներկայացված աշխատանքի կատարման ժամկետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝ «*Պայմանագիրը կնքելու օրվանից և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 75 օրացուցային օրվա ընթացքում*»:
2. Պայմանագրի Հավելված N 2-ով ներկայացված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը փոփոխել և հաստատել ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Մեծամորի համայնքապետարան ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900332001529 ՀՎՀՀ 04440608	«ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ ՀՀ, Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Բաղրամյան փողոց 31/2 «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, Արմավիրի մ/ճ Հ/Հ 220033332895000 ՀՎՀՀ 04437061
համայնքի ղեկավար_____Վ. Խաչատրյան /ստորագրություն/ Կ.Տ	տնօրեն_____Գ. Մխիթարյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«26» հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/57-1 ծածկագրով պայմանագրի
«22» 11 2022թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի																		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*															
			2022թ.		2023թ.													
			նոյեմբեր	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231129/502	Մրգաշատ բնակավայրի երաժշտական դպրոցի վերանորոգման և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00	11,904,000.00

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001529
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար _____ Վ. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ
ՀՀ, Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Բաղրամյան փողոց 31/2
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, Արմավիրի մ/ճ
Հ/Հ 220033332895000
ՀՎՀՀ 04437061

տնօրեն _____ Գ. Մխիթարյան
/ստորագրություն/
Կ.Տ